

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 25/4**

ք.Երևան

8 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ապրանքների դրոշմապիտակավորման հետ առաջացած խնդիրների վերաբերյալ Ա/Ձ Սոնա Դուրյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Ա/Ձ Սոնա Դուրյանը զբաղվում է շինանյութի առք ու վաճառքով և առկա մնացորդի գույքագրման ընթացքում հայտնաբերվել է ՀՀ հարկային օրենսգրքի «Ակցիզային դրոշմանիշերի և կամ դրոշմապիտակների կիրառման» մասով դրոշմավորման ենթակա ապրանքատեսակների մնացորդներ, որը մինչև սույն թվականի մարտի 31-ը չի ներկայացվել դրոշմապիտակների ստացման հայտ, որովհետև տեղեկացված չի եղել (նաև չունի հաշվապահ):

Ա/Ձ Սոնա Դուրյանը նշում է նաև, որ չի հանդիսանում դրոշմավորվող ապրանքներ ներկրող և արտադրող: Իի կողմից դիմումներ է ներկայացվել դրոշմավորման ենթակա տվյալ ապրանքներ արտադրողներին և ներմուծողներին իրեն տրամադրելու իրենց արտադրանքը հանդիսացող և կամ իրենց կողմից ներմուծված ապրանքների մասով դրոշմապիտակներ: Սակայն մեծամասամբ ստացվել են բացասական պատասխաններ (հիմնականում պատճառաբանվել են դրոշմապիտակների սղության փաստը): Նշված ապրանքատեսակները հանվել են առևտրաշրջանառությունից՝ մինչև նշված խնդրի վերաբերյալ օրենսդրական լուծում ստանալը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Սոնա Դուրյանը խնդրում է միջամտել առաջացած խնդրի լուծման համար:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Ա/Ձ Սոնա Դուրյանի կողմից իրականացվել է ապրանքային մնացորդի գույքագրում, որի հետևանքով հայտնաբերվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրոշմավորման ենթակա ապրանքներ: Սակայն Ա/Ձ Սոնա Դուրյանի կողմից մինչև սույն թվականի մարտի 31-ը չի ներկայացվել դրոշմապիտակների ստացման հայտ՝ պատճառաբանելով, որ տեղեկացված չի եղել (նաև չունի հաշվապահ):

Ա/Ձ Սոնա Դուրյանի կողմից դիմումներ են ներկայացվել դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողներին և ներմուծողներին՝ իրենց կողմից ներմուծված կամ արտադրված ապրանքների մասով դրոշմապիտակներ տրամադրելու համար, սակայն դիմումները հիմնականում մերժվել են:

### 3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 119-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն ապրանքները, որոնց համար մինչև 2018 թվականի հունվարի 1-ն օրենսդրությամբ սահմանված չի եղել դրոշմապիտակներով դրոշմավորման իրավական պահանջ, և որոնք անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող անձանց կողմից ձեռք են բերվել մինչև 2018 թվականի հունվարի 1-ը, և որպես ապրանքային մնացորդ, առկա են նրանց մոտ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ, անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից կարող են իրացվել առանց դրոշմապիտակներով դրոշմավորման մինչև 2018 թվականի մարտի 31-ը ներառյալ:

ՀՀ կառավարության 23.10.2017թ. «Արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև օրենքով սահմանված՝ դրոշմավորման ենթակա ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու վերջնաժամկետն իրենց մոտ առկա՝ դրոշմավորման ենթակա ապրանքների գույքագրված մնացորդների դրոշմավորման կարգը հաստատելու մասին» N1587-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

1) 2-րդ կետի համաձայն՝ դրոշմավորման պարտավորություն կրողները չդրոշմավորված ապրանքների մնացորդների դրոշմավորման նպատակով մինչև այդ ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը գույքագրում են իրենց մոտ առկա չդրոշմավորված ապրանքները և դրանց վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում են հարկային մարմին:

2) 5-րդ կետի համաձայն՝ հայտը ներկայացվում է մինչև դրոշմավորման ենթակա ապրանքներն առանց դրոշմավորման օտարելու համար օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մինչև նշված ժամկետը կարող են կատարվել ճշգրտումներ՝ նոր հայտ ներկայացնելու եղանակով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Սոնա Դուրյանի կողմից չեն պահպանվել վերը նշված իրավանորմերով սահմանված պահանջները, իսկ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներն առանց դրոշմապիտակներով դրոշմավորման իրացման այլ կարգ նախատեսված չէ:

### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Սոնա Դուրյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ